

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԻՐԻՆ ՄԷՋ**

**ԴՈԿՏ. ԱՐՄԷՆ ՏԵՐ ԿԻՐԵՂԵԱՆ ԵՒ ԴՈԿՏ.
ԱՇՈՏ ՂԱԶԱՐԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՀԵՏ**

Հայաստանի ամերիկեան համալսարանին եւ անոր կրթական դրութեան ծանօթացման ծիրին մէջ, համալսարանի նախագահ ղոկտ. Արմեն Տեր Կիրեղեան եւ փոխնախագահ ղոկտ. Աշոտ Ղազարեան երեկ այցելեցին ՀԲԸՄ-ի «Տեմիրճեան» կեդրոն, ուր հանդիպում ունեցան կարգ մը հայկական վարժարաններու բարձրագոյն կարգերու աշակերտութեան հետ (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի, ՀԲԸՄ-ի Դարուհի Յակոբեան երկրորդական վարժարանի, Չալքայի Ս. Խաչ- Հարպոյեան վարժարանի աշակերտներ):



ՀԲԸՄ-ի անունով Անիթա Լիպիար ողջունեց ներկաները եւ բացատրեց հանդիպումին նպատակը: Ապա ան բեմ հրաւիրեց Հայաստանի ամերիկեան համալսարանի նախագահը: Դոկտ. Կիրեղեան նշեց, որ երկու տարիէ ի վեր կը վարէ Հայաստանի ամերիկեան համալսարանի նախագահի պաշտօնը: Այս առիթով ցուցադրուեցաւ տեսերիզ մը, ուր անգլերէնով ծանօթացման բացատրութիւններ հաղորդուեցան: Ապա ղոկտ. Տեր Կիրեղեան փոխանցեց ամբողջացուցիչ տեղեկութիւններ համալսարանի գործունեութեան մասին: Ան «**Փառուրդ փոյնթ**»-ի դրութեան միջոցով խօսեցաւ համալսարանի գործունեութեան դրութեան եւ համալսարան ընդունման պայմաններուն, դասընթացքներու ընթացքին ու ստացուելիք վկայականներու աստիճաններուն մասին: 1991-ին հիմնուած համալսարանը ու-

նի քառամեայ դասընթացքի ավարտին ստացուելիք աստիճանի կողքին նաեւ մագիստրոսի վկայականի ուսման կարելիութիւն: Կը մտածուի դոկտորայի աստիճանով դասընթացք եւս կազմակերպել, յատկապէս՝ տնտեսագիտութեան եւ ճարտարագիտութեան մասնագիտութեանց մէջ: Ունի նաեւ գրադարան, ուր կան 45 հազար գիրքեր եւ անելի քան 65 հազար էլեկտրական հատորներ: Դասընթացքները կը կատարուին անգլերէնով, քառամեայ ծրագիրով: Համեմատաբար այլ համալսարաններու, այստեղ կրթաթոշակը անելի աժան եւ նպաստաւոր է: Սփիւռքահայերու համար յատուկ գեղջ կայ: Իսկ Հայաստանի քաղաքացիութիւն ստացած կամ տասնամեայ հայկական անցագիր ունեցողներ կրնան օգտուիլ հայաստանցի ուսանողներու համար կատարուող գեղջերէն: Ապա ղոկտ. Տեր Կիրեղեան պատասխանեց ուսանողներու հարցումներուն: Փոխնախագահ ղոկտ. Աշոտ Ղազարեան եւս փոխանցեց անհրաժեշտ բացատրութիւններ: